ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/201

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյան

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Դառես» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝ Ա. Բաղրամյանի
«Դառես» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» ծածկագրով գնանշման հարցում, Շարժական թիրախային բնագծերի վերանորոգման ծառայությունների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13232-2020 գրությամբ «Դառես» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 28.08.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/2666-2020 գրության հիման վրա, 02.09.2020թ.-ին «Դառես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 02.09.2020թ.-ին: 07.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ՆԳ-2020/218 համարի ծածկագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 14.09.2020թ.-ի թիվ 255-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ՍՑ-ՆԳ-2020/218 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 15.09.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

16.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/201 համարի ծածկագիրը:

23.09.2020թ.-ին, 02.10.2020թ.-ին և 09.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 02.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.10.2020թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 28.08.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/2666-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքում 3, 4, 5, 6, 7, 8, 9 և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Դառես» ՍՊԸ–ն: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջների համաձայն անգործության ժամկետի ավարտից հետո

www.armeps.am համակարգի միջոցով «Դառես» ՍՊԸ–ին ներկայացվել է կնքվելիք պայմանագրի նախագիծը և ծանուցվել է պայմանագիր կնքելու վերաբերյալ, սակայն վերջինս սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու չի ներկայացել:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները «Դառես» ՍՊԸ–ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Դառես» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

01.10.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/3109-2020 գրությամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման արդյունքում 3, 4, 5, 6, 7, 8, 9 և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Դառես» ՍՊԸ–ն: Անգործության ժամկետի ավարտից հետո «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն www.armeps.am համակարգի միջոցով «Դառես» ՍՊԸ–ին ներկայացվել է կնքվելիք պայմանագրի նախագիծը և ծանուցվել է պայմանագիր կնքելու վերաբերյալ, սակայն վերջինս 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ «Դառես» ՍՊԸ–ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Ինչ վերաբերում է «Դառես» ՍՊԸ–ի ներկայացուցչի կողմից 21.08.2020թ-ին ՀՀ պաշտպանության նախարարություն մուտք գործելուն և պայմանագրի հաստատած օրինակները, պայմանագրի ու որակավորման ապահովումների բանկային երաշխիքները ներկայացնելուն, այո, «Դառես» ՍՊԸ–ի ներկայացուցիչը նշված օրը մուտք է գործել ՀՀ պաշտպանության նախարարություն, սակայն հայտնում և հավաստիացնում եմ, որ վերջինս չի ներկայացրել ոչ պայմանագրի հաստատած օրինակները և ոչ էլ պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները (միթե 21.08.2020թ-ին ՀՀ պաշտպանության նախարարություն մուտք գործելը վկայում է, որ «Դառես» ՍՊԸ–ն ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը՝ իհարկե ոչ:) «Դառես» ՍՊԸ–ն նշում է, որ

լիազորված ներկայացուցիչը ստորագրված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները՝ բանկային երաշխիքների տեսքով ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանում, այնուհետև նշում է, որ պայմանագրի օրինակները՝ պայմանագրի և որակավորման ապահովումներով ներկայացրել է գնահատող հանձնաժողովին, այնուհետև նշում է, որ վերը նշված փաստաթղթերը ներկայացրել է ընթացակարգի քարտուղարին: Վերջիվերջո «Դառես» ՍՊԸ–ն այդ փաստաթղթերը ում է ներկայացրել և որտեղ են այս պահին դրանք գտնվում:

«Դառես» ՍՊԸ–ն նշում է, որ տրամաբանական չէ պայմանագրի և որակավորման ապահովումներ ստանալու համար իր կողմից գույք գրավադրելը, վճարումներ կատարելը, եթե չէր ներկայանալու պայմանագիր կնքելու:

Քանի որ «Դառես» ՍՊԸ–ն փորձում է սույն հարցը տեղափոխել նաև տրամաբանության դաշտ, ուստի նշեմ, որ էլ ավելի անտրամաբանական է «Դառես» ՍՊԸ–ի վարքագիծը՝ հետևյալ պատճառաբանությամբ, փաստորեն ստացվում է, որ «Դառես» ՍՊԸ–ի ներկայացուցիչը 21.08.2020թ-ին մուտք է գործել ՀՀ պաշտպանության նախարարություն և պայմանագրի օրինակները՝ պայմանագրի և որակավորման ապահովումներով միաժամանակ ներկայացրել է և համապատասխան ստորաբաժանմանը և գնահատող հանձնաժողովին և ընթացակարգի քարտուղարին, ինչը ոչ միայն անտրամաբանական է այլ ֆիզիկապես անհնար: Անտրամաբանական է նաև գնահատող հանձնաժողովի կողմից «Դառես» ՍՊԸ–ին ընտրված մասնակից ճանաչելը, սակայն այնուհետև պայամանգիր չկնքելը:

Այնուամենայնիվ, 26.08.2020թ. «Դառես» ՍՊԸ–ն ծանուցված լինելով, որ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից ոչ մի քայլ չի ձեռնարկել իր իբր ոտնահարված շահը վերականգնելու ուղղությամբ: ՈՒր մնաց «Դառես» ՍՊԸ-ի տրամաբանությունը: Ավելին մինչ այս պահը չի էլ հետաքրքրվել թե 21.08.2020թ-ին իբր ներկայացված բանկային երաշխիքները որտեղ են, միթե «Դառես» ՍՊԸ–ն որոշել է գրավադրված գույքը զիջել բանկին (իսկ միգուցե այդ փաստաթղթերը գտնվում են Դառես» ՍՊԸ–ի մոտ):

Միաժամանակ տեղեկացնում ենք որ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգ 3, 4, 5, 6, 7, 8, 9 և 10-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը (պայմանագիր չի կնքվում):

Կրկին անգամ հավաստիացնում եմ, որ «Դառես» ՍՊԸ–ի պնդումը՝ պայմանագրի հաստատած օրինակները, պայմանագրի ու որակավորման ապահովումների բանկային երաշխիքները 21.08.2020թ-ին ՀՀ պաշտպանության նախարարություն ներկայացնելու

մասով չի համապատասխանում իրականությանը (պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում նման փաստաթղթեր չեն հաշվառվել):

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում ենք, որ առկա են բոլոր հիմքերը «Դառես» ՍՊԸ–ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:»:

3. <u>«Դառես» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «Դառես» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13232-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին, 14.09.2020թ.-ին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

««Դառես» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և ճանաչվել ընտրված մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Դառես» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 07.08.2020թ. «Դառես» ՍՊԸ-ին ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» ծածկագրով ընթացակարգի համար պայմանագիր կնքելու առաջարկ:

«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու առաջարկը 07.08.2020թ. ստանալուց հետո՝ 10-րդ աշխատանքային օրը, այն է՝ 21.08.2020թ., «Դառես» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչը՝ Միեր Մխեյանը, «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ից ստանալով որակավորման և պայմանագրի ապահովումները /բանկային երաշխիքներ թիվ 5288-02 և 5287-02, պատճենները կցվում են՝ /ներկայացել է ՀՀ պաշտպանության նախարարության՝ համապատասխան փաստաթղթերը/ «Դառես» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ստորագրած պայմանագիրը, ինչպես նաև բանկային երաշխիքներ թիվ 5288-02 և 5287-02/՝ հանձնելով դրանք համապատասխան ստորաբաժանում:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 26.08.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ «Դառես» ՍՊԸ-ին

ներկայացվել է պայմանագիր կնքելու շնորհում և սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու նպատակով չեն ներկայացել ու չեն ներկայացրել բանկային երաշխիքները /պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները/՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները «Դառես» ՍՊԸ-ին ճանաչել պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկված մասնակից:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները՝

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Ընթացակարգերի հրավերի ՄԱՍ 1-ի 10.2 կետի՝ մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնում է որակավորման ապահովում՝ շինարարական աշխատանքի գնման համար սահմանված կարգով հաստատված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված արժեքի տասը տոկոսի չափով:

Որակավորման ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով (հավելված 4), որը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրով (համաձայնագրով) ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարմանը հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:

Նույն Ընթացակարգերի հրավերի ՄԱՍ 1-ի 10.3 կետի՝ Պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երախիքի (հավելված 5) կամ կանխիխ փողի ձևով:

Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է չափաբաժիններով և մասնակիցը ընտրված մասնակից է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով ու վերջինիս հետ կնքվող պայմանագրի ընդհանուր գինը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, ապա պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով՝ պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսի չափով:

Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում՝ ամբողջական պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Հայտնում ենք, որ «Դառես» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին է ներկայացվել՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» ծածկագրով գնման ընթացակարգի ՍՊԸ-ի կողմից հաստատված պայմանագրի օրինակները՝ պայմանագրի և որակավորման ապահովումներով:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 26.08.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ «Դառես» ՍՊԸ-ն պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում՝ սահմանված ժամկետում չի ներկայացել պայմանագիր կնքելու և չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ուստի Ընկերությունը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում են նկատի ունենալ մի շատ կարևոր հանգամանք.

21.08.2020թ. «Դառես» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Միեր Մխեյանը համապատասխան լիազորագրի առկայությամբ անցագրային բաժնի միջոցով մուտք է գործել ՀՀ պաշտպանության նախարարություն՝ ընթացակարգի քարտուղարին ներկայացնելով «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» ծածկագրով գնման ընթացակարգի ՍՊԸ-ի կողմից հաստատված պայմանագրի օրինակները՝ պայմանագրի և որակավորման ապահովումներով:

Վերը նշված հանգամանքը հնարավոր է պարզել նաև պաշտոնական հարցում կատարելով ՀՀ ՊՆ, որի անցագրային բաժնից ստացված տեղեկությունից պարզ կդառնա, որ «Դառես» ՍՊԸ-ի ներկայացուցիչը համապատասխան լիազորագրով 21.08.2020թ. մուտք է գործել ՀՀ ՊՆ:

Հաջորդ կարևորագույն հանգամանքը կայանում է նրանում, որ ներկա պահին «Դառես» ՍՊԸ-ի մոտ են գտնվում «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կնքվելիք պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումների /բանկային երաշխիքներ թիվ 5288-02 և 5287-02/՝պատճենները, նաև սկանավորված տարբերակներով/ և տրամաբանական չէ, թե ինչու պետք էր «Դառես» ՍՊԸ-ն կատարեր գույքի գրավադրում՝ կատարեր վճարումներ ձեռք բերելու որակավորման և պայմանագրի ապահովումներ՝ բանկային երաշխիքներ, եթե չէր ներկայանալու պայմանագիր կնքելու:

Վերը նշված հանգամանքը փաստելու նպատակով «Դառես» ՍՊԸ-ն հարցում է ներկայացրել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին, որով խնդրել ենք հայտնել, թե «ՀԱՅԲԻԶՆԵՍ-ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կնքվելիք պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումները՝ բանկային երաշխիքները, երբ են տրամադրվել «Դառես» ՍՊԸ-ին:

Ամփոփելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ սույն ընթացակարգի օբյեկտիվ քննության նպատակով պայմանավորված՝ բողոքներ քննող անձը չի կարող անտեսել այն հանգամանքը, որ ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչը մուտք է գործել ՀՀ պաշտպանության նախարարություն՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կնքվելիք պայմանագրի օրինակները, որակավորման և պայմանագրի ապահովումների /բանկային երաշխիքներ թիվ 5288-02 և 5287-02/ հետ միասին և չի կարող հիմնավորված համարել Պատվիրատուի բերած այն հիմնավորումը, որ «Դառես» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացել պայմանագիր կնքելու ու չի ներկայացրել բանկային երաշխիքները /պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները/:

Մինչդեռ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից և գնահատումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձը:

Վերոհիշյալի արդյունքում Ընկերության պայմանագիր կնքելու իրավունքից զրկելը իր հերթին հանգեցեցրել է «Դառես» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Դառես» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի որևէ խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակցի ներկայացուցիչը ներկայանալով 02.10.2020թ.-ի հրավիրված նիստին, հանդես է եկել միջնորդությամբ, առ այն, որ Մասնակիցը հրաժարվում է Բողոքներ քննող անձին 14.09.2020թ.-ի ներկայացված դիրքորոշումից և և խնդրում է այն քննության չառնել:

4. <u>ՍՑ-LO-2020/201 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շարժական թիրախային բնագծերի վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 03.07.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Դառես» ՍՊԸ-ն:

ii. «Դառես» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված

կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.07.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 3-10-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Դառես» ՍՊԸ-ին:

iv. 27.07.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից 5-րդ օրացույցային օրը ներառյալ:

v. Պատվիրատուն 07.08.2020թ.-ին Մասնակցին ներկայացրել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» ծածկագրով պայմանագրի նախագիծը և հայտնել, որ անհրաժեշտ է ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում կազմել պայմանագրի կատարման ապահովումը, ստուգել պայմանագրի նախագիծը և ստորագրելու համար ներկայանալ ՀՀ ՊՆ ԳԿ վարչություն, ինչպես նաև անհրաժեշտ է Armeps համակարգում պատասխանել պայմանագրի շնորհմանը:

vi. 26.08.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Դառես» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացել պայմանագիր կնքելու նպատակով և չի ներկայացրել պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները, ինչի արդյունքում Հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները որոշել է «Դառես» ՍՊԸ-ին զրկվել պայմանագիր կնքելու իրավունքից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13232-2020 գրությամբ «Դառես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես

նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շարժական թիրախային բնագծերի վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 03.07.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Դառես» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 27.07.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ ընթացակարգի 3-10-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է հաղթող մասնակից և վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Պատվիրատուն 07.08.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-2/5» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ անհրաժեշտ է ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում կազմել պայմանագրի կատարման ապահովումը, ստուգել պայմանագրի նախագիծը և ստորագրելու համար ներկայանալ ՀՀ ՊՆ ԳԿ վարչություն, ինչպես նաև անհրաժեշտ է Armeps համակարգում պատասխանել պայմանագրի շնորհմանը:

Հանձնաժողովի 26.08.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Դառես» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագիրը,

որակավորման և պայմանագրի ապահովումները և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները որոշել է «Դառես» ՍՊԸ-ին զրկվել պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոգրյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, դրանք համադրելով գործում առկա փաստերին, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Դառես» ՍՊԸ-ի կողմից ստանձնած պարտավորությունների խախտմանը նպաստել է Հանձնաժողովի քարտուղարի կողմից Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի դրույթների սխալ կիրառումը, այն է՝ Մասնակցին ուղարկված ծանուցմամբ նշվել է, որ պայմանագիրը ստորագրելու համար պետք է ներկայանալ ՀՀ ՊՆ ԳԿ վարչություն, այն դեպքում, երբ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ գործում առկա «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 21.08.2020թ.-ին Մասնակցին տրամադրված թիվ 5288-02 որակավորման և թիվ 5287-02 պայմանագրի ապահովման բանկային երաշխիքների առկայությունն ինքնին բացառում է Մասնակցի կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելուն ուղղված անգործության մատնվելու հանգամանքը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ սույն դեպքում Պատվիրատուի կողմից Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի սխալ կիրառումը հանգեցրել և նպաստել է Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը, որպիսի պարագայում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13232-2020 գրությամբ «Դառես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/201 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**